



ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ



ՀՀ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՏԵՂԵԿԱԳԻ Ր



- ✓ ՄԹՆՈՒՈՐՏԱՅԻՆ ՕՂ
- ✓ ՄԹՆՈՒՈՐՏԱՅԻՆ ՏԵՂՈՒՄՆԵՐ
- ✓ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐ
- ✓ ՄՏՈՐԵՐԿՐՅԱՋՐԵՐ
- ✓ ՀՈՂԱՅԻՆԾԱԾԿՈՒՅԹ

Բովանդակություն

ՆԱԽԱԲԱՆ.....	3
ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴ	6
Երևան	6
Գյումրի	13
Վանաձոր	15
Ալավերդի	17
Հրազդան	20
Արարատ	23
Ծաղկաձոր	31
«Եվրոպայի մեծ հեռավորությունների վրա անդրսահմանային աղտոտիչների տարածման դիտարկումների և գնահատման համատեղ ծրագիր»	35
ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՔԱՂՑՐԱՀԱՄ ՁՐԵՐ	37
Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք	37
Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածք	42
Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք	46
Սևանի ջրավազանային կառավարման տարածք	51
Սևանա լիճ	52
Արարատյան ջրավազանային կառավարման տարածք	59
Հարավային ջրավազանային կառավարման տարածք	63
ՀՀ ջրամբարների ջրերի որակը 2019 թվականի 4-րդ եռամսյակում	67
Արաքս գետ	69
Հավելված 1. ՀՀ գետերի ջրերի որակը 2019 թվականի 4-րդ եռամսյակում	73
Ստորերկրյա քաղցրահամ ջրերի մոնիթորինգի դիտակետերը	95
Մակերևութային ջրերում որոշվող ցուցանիշների ցանկ	99
Ստորերկրյա ջրերում որոշվող ցուցանիշների ցանկ	100
Տեղումներում որոշվող ցուցանիշների ցանկ	100
Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները	101
Մակերևութային ջրերի էկոլոգիական նորմերը	102
Մակերևութային ջրերի ձկնատնտեսական սահմանային թույլատրելի կոնցենտրացիաներ	102
Ընդհանրացված ցուցանիշներով և բնական ջրերում հաճախ հանդիպող վնասակար քիմիական նյութերի և անտրոպոգեն ծագումով նյութերի թույլատրելի սահմանային կոնցենտրացիաների նորմերը	104

ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի Հանրապետության Շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի տեղեկագրում ներկայացված են մթնոլորտային օդի, մակերևութային և ստորերկրյա քաղցրահամ ջրերի, մթնոլորտային տեղումների որակի մոնիթորինգի վերաբերյալ տեղեկատվություն՝ 2019 թվականի 4-րդ եռամսյակն ընդգրկող ժամանակահատվածի համար:

Ներկայումս մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումներն իրականացվում են հիբրիդային դիտացանցի միջոցով: Այն բաղկացած է 16 հիմնական անշարժ՝ ակտիվ նմուշառման դիտակայանից, որտեղ դիտարկումներն իրականացվում են ամենօրյա կտրվածքով և 211 արժական՝ պասիվ նմուշառման դիտակետից, որտեղ իրականացվում են շաբաթական դիտարկումներ: ՀՀ և միջազգային պահանջների համաձայն անշարժ դիտակայաններում կատարվում է հիմնական աղտոտող նյութերի՝ ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, փոշու, փոշու մեջ որոշվող մետաղների և գետնամերձ օզոնի (որպես երկրորդային աղտոտիչ) մոնիթորինգ, իսկ արժական դիտակետերում՝ ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի մոնիթորինգ: Օդի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N160-Ն որոշման:

Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված է Հանրապետության 6 ջրավազանային կառավարման տարածքի (Հյուսիսային, Ախուրյան, Հրազդան, Սևան, Արարատյան, Հարավային) ջրային օբյեկտների (գետեր, ջրամբարներ, Արփա-Սևան ջրատարը և Սևանա լիճը) 144 դիտակետ: Ջրի որակը բնութագրվում է ֆիզիկաքիմիական ավելի քան 45 ցուցանիշով (հիմնական անիոններ և կատիոններ, սնուցող նյութեր, ծանր մետաղներ, առաջնային օրգանական աղտոտիչներ), տարեկան 5-12 անգամ հաճախականությամբ: Ջրի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N75-Ն որոշման:

Ստորերկրյա քաղցրահամ ջրերի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված են Հանրապետության 6 ջրավազանային կառավարման տարածքի (Հյուսիսային, Ախուրյան, Հրազդան, Սևան, Արարատյան, Հարավային) 100 ստորերկրյա ջրաղբյուր, ինչը ներառում է 23 շատրվանոց հորատանցք, 22 չշատրվանոց հորատանցք և 55 բնաղբյուր: Ջրաղբյուրներում կատարվում են ջրի ծախսի, մակարդակի (ճնշման) և ջերմաստիճանի դիտարկումներ՝ ամսական 6 անգամ հաճախականությամբ: Տարեկան 2 անգամ կատարվում է նաև ստորերկրյա ջրերի որակի մոնիթորինգ 40 ջրաղբյուրում, որոնցից յուրաքանչյուրում որոշվում է շուրջ 40 ցուցանիշ (հիմնական անիոններ և կատիոններ, մետաղներ, աղային ռեժիմի տարրեր): Ստորերկրյա քաղցրահամ ջրերի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 25-ի N876-Ն հրամանի:

Տեղեկագրում ներկայացված են նաև միջազգային համագործակցության շրջանակներում կատարվող աշխատանքների արդյունքները.

- «Եվրոպայում մեծ հեռավորությունների վրա օդի աղտոտիչների տարածման մոնիթորինգի և գնահատման» (EMEP) ծրագրի շրջանակներում ՀՀ-ում գործում է մթնոլորտային օդի անդրսահմանային աղտոտվածության մոնիթորինգի առաջին մակարդակի դիտակայան (Ամբերդի դիտակայան): Դիտակայանի մթնոլորտային օդի և մթնոլորտային տեղումների որակի մոնիթորինգի արդյունքները ներկայացվում են ՄԱԿ-ի ԵՏՀ «Մեծ հեռավորությունների վրա օդի անդրսահմանային

աղտոտվածության մասին» կոնվենցիայի քիմիական կոորդինացիոն կենտրոն՝ անդրսահմանային օդի աղտոտվածության տվյալների միասնական համակարգի (EBAS) միջոցով, որը գործում է Նորվեգիայի օդի հետազոտության ինստիտուտի ներքո: Մոնիթորինգի և արտանետումների տվյալների հիման վրա Նորվեգիայի օդերևութաբանական ինստիտուտի կողմից կատարվում է օդի անդրսահմանային աղտոտման մոդելավորում և պատրաստվում է Հայաստանի Հանրապետության համար տարեկան զեկույց:

▪ Հայաստանի Հանրապետությունը Իրանի Իսլամական Հանրապետության հետ համատեղ կատարվում են սահմանային Արաքս գետի ջրի և հատակային նստվածքների ուսումնասիրություններ՝ երկու երկրների տարածքներից Արաքս գետի աղտոտվածության վիճակը գնահատելու նպատակով: Պարբերաբար երկու երկրների միջև տեղի է ունենում տվյալների փոխանակում:

Տեղեկագրում օգտագործվել են հետևյալ հապավումները.

- ԸԱԱ — ընդհանուր անօրգանական ազոտ
- ԸԼԱ — ընդհանուր լուծված աղեր
- ԿՆ — կախյալ նյութեր
- ԹԿՊ₅ — թթվածնի հնգօրյա կենսաբանական պահանջ
- ԹՔՊ — թթվածնի քիմիական պահանջ
- ՋԿՏ — ջրավազանային կառավարման տարածք
- ՍԹԿ — սահմանային թույլատրելի կոնցենտրացիա

ՀՀ մթնոլորտային օդի, մակերևութային ջրերի և ստորերկրյա քաղցրահամ ջրերի մոնիթորինգի դիտացանց



ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕՂ

2019 թվականի 4-րդ եռամսյակում մթնոլորտային օդի դիտարկումներ կատարվել են Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Չարենցավան, Կապան և Քաջարան քաղաքներում: Ընդհանուր առմամբ վերը թվարկված բնակավայրերում գործում է 14 անշարժ՝ ակտիվ նմուշառման դիտակայան, և 211 շարժական՝ պասիվ նմուշառման դիտակետ: Մթնոլորտն աղտոտող նյութերի պարունակությունները որոշելու համար 4-րդ եռամսյակում ակտիվ նմուշառմամբ վերցվել է մթնոլորտային օդի 3775 փորձանմուշ: Հանրապետության 10 բնակավայրի պասիվ նմուշառման դիտակետերից վերցվել է մթնոլորտային օդի 4806 փորձանմուշ:

Բնակավայրերի մթնոլորտային օդի փոշում մետաղների պարունակության կատարված դիտարկումների վերաբերյալ ընդհանրական տեղեկատվություն կտրվի տարեկան տեղեկագրում:

Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Չարենցավան, Կապան, Քաջարան և Ծաղկաձոր քաղաքների մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական և միջին շաբաթական կոնցենտրացիաների բաշխվածության քարտեզները հասանելի են www.armmonitoring.am ինտերնետային կայքում:

Երևան

Երևան քաղաքում կատարվում են փոշու*, ծծմբի երկօքսիդի**, ազոտի երկօքսիդի, և գետնամերձ օդոնի դիտարկումներ: Քաղաքում գործում է 42 շարժական դիտակետ և հինգ անշարժ դիտակայան:

2019 թվականի 4-րդ եռամսյակում անշարժ դիտակայաններում վերցվել է ակտիվ նմուշառման 1701 փորձանմուշ, իսկ շարժական դիտակետերից՝ պասիվ նմուշառման 1058 փորձանմուշ:

Որոշված միացությունների միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսների ընթացքում չեն գերազանցել համապատասխան ՄԹԿ-ները:

*Երևան քաղաքի մթնոլորտային օդի դիտարկումների արդյունքները
(ակտիվ նմուշառում)*

Հոկտեմբեր

Աղտոտող նյութ	ՄԹԿ (միջին օրական), մգ/մ³	Միջին ամսական կոնցենտրացիա, մգ/մ³	Առավելագույն կոնցենտրացիա ըստ դիտակայանների, մգ/մ³	Դիտար- կումների քանակ	ՄԹԿ-ից գերազան- ցումների քանակ
Ծծմբի երկօքսիդ	0.05	0.014	0.046 (դիտ. № 2)	155	-
Ազոտի երկօքսիդ	0.04	0.012	0.037 (դիտ. № 18)	155	-
Փոշի	0.15	0.079	0.281 (դիտ. № 18)	154	12
Գետնամերձ օդոն	0.03	0.003	0.009 (դիտ. № 7)	155	-

*կախված մասնիկներ

**անհիդրիդ ծծմբային



Նոյեմբեր


Աղտոտող նյութ	ՍԹԿ (միջին օրական), մգ/մ³	Միջին ամսական կոնցենտրացիա, մգ/մ³	Առավելագույն կոնցենտրացիա ըստ դիտակայանների, մգ/մ³	Դիտարկումների քանակ	ՍԹԿ-ից գերազանցումների քանակ
Ծծմբի երկօքսիդ	0.05	0.021	0.150 (դիտ. № 7)	150	12
Ազոտի երկօքսիդ	0.04	0.016	0.044 (դիտ. № 8)	150	4
Փոշի	0.15	0.146	0.437 (դիտ. № 18)	149	60
Գետնամերձ օդոն	0.03	0.004	0.014 (դիտ. № 1)	150	-

Դեկտեմբեր




Աղտոտող նյութ	ՍԹԿ (միջին օրական), մգ/մ³	Միջին ամսական կոնցենտրացիա, մգ/մ³	Առավելագույն կոնցենտրացիա ըստ դիտակայանների, մգ/մ³	Դիտարկումների քանակ	ՍԹԿ-ից գերազանցումների քանակ
Ծծմբի երկօքսիդ	0.05	0.016	0.053 (դիտ. № 7)	124	3
Ազոտի երկօքսիդ	0.04	0.012	0.081 (դիտ. № 18)	125	5
Փոշի	0.15	0.142	0.590 (դիտ. № 18)	124	46
Գետնամերձ օդոն	0.03	0.003	0.008 (դիտ. № 1)	110	-

Երևան քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.











Երևան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.






Երևան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.



Երևան քաղաքի մթնոլորտային օդում գետնամերձ օզոնի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.




Երևան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի (SO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը



Պայմանական նշաններ




- Պասիվ նմուշառման դիտակետեր
- Ակտիվ նմուշառման դիտակայաններ
- Գետային ցանց
- Ճանապարհներ և փողոցներ
- Երկաթգծեր
- Երևանի վարչական շրջաններ

Ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը ($մգ/մ^3$)



www.armmonitoring.am


Երևան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը



Պայմանական նշաններ

- Պասիվ նմուշառման դիտակետեր
- Ակտիվ նմուշառման դիտակայաններ
- Գետային ցանց
- Ճանապարհներ և փողոցներ
- Երկաթգծեր
- Երևանի վարչական շրջաններ

Ազոտի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը (մգ/մ³)






Գյումրի


Գյումրի քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում է մեկ անշարժ դիտակայան և 24 շարժական դիտակետ:

Անշարժ դիտակայանում վերցվել է մթնոլորտային օդի ակտիվ նմուշառման 54 փորձանմուշ, շարժական դիտակետերում՝ պասիվ նմուշառման 568 փորձանմուշ:

Որոշված միացությունների միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսների ընթացքում չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

Գյումրի քաղաքի մթնոլորտային օդում որոշված միացությունների միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.







Վանաձոր

Վանաձոր քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Քաղաքում գործում են երեք անշարժ դիտակայան և 24 շաբաթական դիտակետ:


Անշարժ դիտակայաններում վերցվել է մթնոլորտային օդի ակտիվ նմուշառման 798 փորձանմուշ, շաբաթական դիտակետերում պասիվ նմուշառման 576 փորձանմուշ:

Փոշու միջին ամսական կոնցենտրացիան հոկտեմբերին չի գերազանցել համապատասխան ՍԹ-ն, նոյեմբերին գերազանցել է 1.1 անգամ, դեկտեմբերին՝ 1.2 անգամ: Ծծմբի և ազոտի երկօքսիդների միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսների ընթացքում չեն գերազանցել համապատասխան ՍԹ-ները:

*Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում որոշված միացությունների
կոնցենտրացիաների փոփոխությունները.*



Վանաձորի մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտացանց





Ալավերդի

Ալավերդի քաղաքում և հարակից համայնքներում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների և ածխածնի մոնօքսիդի դիտարկումներ: Գործում են երեք անշարժ դիտակայան և 42 շարժական դիտակետ:



2019 թվականի 4-րդ եռամսյակում անշարժ դիտակայաններում վերցվել է ակտիվ նմուշառման 615 փորձանմուշ, իսկ շարժական դիտակետերից՝ պասիվ նմուշառման 1080 փորձանմուշ:

Փոշու միջին ամսական կոնցենտրացիան հոկտեմբերին և դեկտեմբերին չի գերազանցել համապատասխան ՍԹ-ն, նոյեմբերին գերազանցել է 1.3 անգամ: Ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան հոկտեմբերին և դեկտեմբերին չի գերազանցել համապատասխան ՍԹ-ն, նոյեմբերին գերազանցել է ՍԹ-ն աննշան, միջին ամսական կոնցենտրացիան կազմել է 0.052 մգ/մ^3 ($\text{ՍԹ}_{\text{միջ.օր}} = 0.05 \text{ մգ/մ}^3$): Ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսների ընթացքում չեն գերազանցել համապատասխան ՍԹ-ները:


Ալավերդի քաղաքի և հարակից համայնքների մթնոլորտային օդում որոշված միացությունների միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.




Ալավերդի քաղաքի և հարակից համայնքների մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի (SO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը





- Պայմանական նշաններ**
- Պասիվ նմուշառման դիտակետեր
 - Ակտիվ նմուշառման դիտակայաններ
 - Գետային ցանց
 - Ճանապարհներ և փողոցներ
 - Միջպետական ճանապարհ
 - Երկաթգծեր
 - Բնակավայրեր



Ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը (մգ/մ³)




Ալավերդի քաղաքի և հարակից համայնքների մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը




Պայմանական նշաններ

- Պասիվ նմուշառման դիտակետեր
- Ակտիվ նմուշառման դիտակայաններ
- Գետային ցանց
- Ճանապարհներ և փողոցներ
- Միջպետական ճանապարհ
- Երկաթգծեր
- Բնակավայրեր



Ազոտի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը (մգ/մ³)






Հրազդան

Հրազդան քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Քաղաքում գործում են մեկ անշարժ դիտակայան և 17 շարժական դիտակետեր:




Անշարժ դիտակայանում ակտիվ նմուշառման եղանակով վերցվել է մթնոլորտային օդի 258, շարժական դիտակետերից պասիվ նմուշառման եղանակով՝ 408 փորձանմուշ:

Փոշու միջին ամսական կոնցենտրացիան հոկտեմբերին գերազանցել է ՍԹ-ն 1.5 անգամ, նոյեմբերին՝ 1.4 անգամ, դեկտեմբերին՝ 1.4 անգամ: Ծծմբի և ազոտի երկօքսիդների միջին ամսական կոնցենտրացիաներն երեք ամիսների ընթացքում չեն գերազանցել համապատասխան ՍԹ-ները:


Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում որոշված միացությունների միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.



Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի (SO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը



Ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիոն
բաշխվածության սանդղակը (մգ/մ³)






Պայմանական նշաններ


- | | |
|---------------------------------|----------------------|
| ◆ Պասիվ նմուշառման դիտակետեր | — Գետային ցանց |
| ◆ Ակտիվ նմուշառման դիտակայաններ | □ Բնակավայրեր |
| — Ճանապարհներ և փողոցներ | ▨ Աղբյուրակ, ջրամբար |
| — Երկաթգծեր | |



Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը



Ազոտի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը (մգ/մ^3)



Պայմանական նշաններ

- Պասիվ նմուշառման դիտակետեր
- Ակտիվ նմուշառման դիտակայաններ
- Ճանապարհներ և փողոցներ
- Երկաթգծեր
- Գետային ցանց
- Բնակավայրեր
- Աղբյուրակ, ջրամբար




Արարատ


Արարատ քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում են մեկ անշարժ դիտակայան և 12 շարժական պասիվ նմուշառման դիտակետ:

Անշարժ դիտակետում ակտիվ նմուշառման եղանակով վերցվել է մթնոլորտային օդի 88 փորձանմուշ, շարժական դիտակայաններում պասիվ նմուշառման եղանակով՝ 285 փորձանմուշ:

Փոշու միջին ամսական կոնցենտրացիան հոկտեմբեր ամսին գերազանցել է ՍԹ-ն 1.6 անգամ, նոյեմբեր ամսին՝ 1.5 անգամ, դեկտեմբեր ամսին գերազանցել է ՍԹ-ն աննշան, միջին ամսական կոնցենտրացիան կազմել է 0.106 մգ/մ^3 ($\text{ՍԹ}_{\text{միջ.օր}} = 0.10 \text{ մգ/մ}^3$): Ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաներն երեք ամիսների ընթացքում չեն գերազանցել համապատասխան ՍԹ-ները:

Արարատ քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի և ազոտի երկօքսիդների միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.







Կապան


Կապան քաղաքի մթնոլորտային օդում կատարվում են ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: 2019 թվականի 4-րդ եռամսյակի ընթացքում Կապան քաղաքի 11 շարժական դիտակետերից պասիվ նմուշառմամբ վերցվել է մթնոլորտային օդի 105 փորձանմուշ:

Որոշված միացությունների միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսների ընթացքում չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

Կապան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի և ազոտի երկօքսիդների միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.



Կապանի մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտացանց





Քաջարան


Քաջարան քաղաքի մթնոլորտային օդում կատարվում են ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաջարան քաղաքի 15 դիտակետից պասիվ նմուշառմամբ վերցվել է մթնոլորտային օդի 150 փորձանմուշ:

Որոշված միացությունների միջին ամսական կոնցենտրացիաներն երեք ամիսների ընթացքում չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

Քաջարան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի և ազոտի երկօքսիդների միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.



Քաջարանի մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտացանց



ՊԱՅՄԱՆԱԳԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Մթնոլորտային օդի որակի չարժեքային դիտակետեր
- Քաջարանի գետ
- Ճանապարհային ցանց
- Տեղական նշանակության Պետական նշանակության Երկաթուղային ցանց
- Բնակավայրեր
- Բնակավայրի սահման



0 0.05 0.1 0.2 0.3 կմ


Չարենցավան

Չարենցավան քաղաքի մթնոլորտային օդում կատարվում են ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Չարենցավան քաղաքի 10 դիտակետից պասիվ նմուշառմամբ վերցվել է մթնոլորտային օդի 240 փորձանմուշ:

Որոշված միացությունների միջին ամսական կոնցենտրացիաներն երեք ամիսների ընթացքում չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

Չարենցավան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի և ազոտի երկօքսիդների միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.








Ծաղկաձոր

Ծաղկաձոր քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում են մեկ անշարժ դիտակայան և 14 շարժական պասիվ նմուշառման դիտակետ:

Անշարժ դիտակայանում ակտիվ նմուշառման եղանակով վերցվել է մթնոլորտային օդի 261, շարժական դիտակետերից պասիվ նմուշառման եղանակով՝ 336 փորձանմուշ:



Մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին ամսական կոնցենտրացիաներն երեք ամիսների ընթացքում չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի և ազոտի երկօքսիդների կոնցենտրացիաների փոփոխությունները.




* Համաձայն 160-Ն որոշման առողջարանային և զբոսաշրջության քաղաքներում նորմը վերցվում է 0.8*ՍԹԿ:

Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի (SO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը




Պայմանական նշաններ



- Պասիվ նմուշառման դիտակետեր
- Ակտիվ նմուշառման դիտակայաններ
- Գետային ցանց
- Ճանապարհներ և փողոցներ
- Բնակավայրեր



Ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիոն
բաշխվածության սանդղակը (մգ/մ³)




**Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO_2)
միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը**




Պայմանական նշաններ

- Պասիվ նմուշառման դիտակետեր
- Ակտիվ նմուշառման դիտակայաններ
- Գետային ցանց
- Ժամանակակից և փողոցներ
- Բնակավայրեր



Ազոտի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը (մգ/մ^3)



Մթնոլորտային տեղումներ

2019 թվականի 4-րդ եռամսյակի ընթացքում Ծաղկաձորում վերցվել է 4 փորձանմուշ (թաց ձյուն, ձյուն): Վերցված փորձանմուշներում որոշվել է 35-ական ցուցանիշ: Որոշված ցուցանիշների կոնցենտրացիաները ստորև բերվում են աղյուսակի տեսքով: 4-րդ եռամսյակում չներկայացված ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը կներկայացվի տարեկան տեղեկագրում:

Ամսաթիվ	Ցուցանիշներ						
	Զրաձնային ցուցիչ	Էլեկտրահա- ղորդականություն (մկՍմ/սմ)	Մուլֆատիոն (մգ/լ)	Քլորիդիոն (մգ/լ)	Նիտրատ իոն (մգ/լ)	Ֆտորիդ իոն (մգ/լ)	Ամոնիում իոն (մգ/լ)
02.11-03.11.2019	5.63	13.0	1.66	0.46	1.75	<0.005	0.514
28.11-29.11.2019	6.66	33.1	2.77	1.30	3.32	<0.005	1.049
02.12-03.12.2019	5.48	9.4	0.84	0.28	2.35	<0.005	0.546
27.12-28.12.2019	6.98	28.4	0.61	1.09	2.06	<0.005	1.667

«Եվրոպայի մեծ հեռավորությունների վրա անդրսահմանային աղտոտիչների տարածման դիտարկումների և գնահատման համատեղ ծրագիր»



Մթնոլորտային օդ

Ամբերդի կայանում 2019 թվականի 4-րդ եռամսյակում վերցվել է մթնոլորտային օդի 119 և փոշու 60 փորձանմուշ:

Մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշվել են ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, ամոնիակի և նիտրատ իոնի, իսկ փոշու փորձանմուշներում՝ քլորիդ, նիտրատ, սուլֆատ, ամոնիում իոնների և 21 մետաղների պարունակությունները: Կատարված դիտարկումների վերաբերյալ ընդհանրական տեղեկատվություն կտրվի տարեկան տեղեկագրում:

Ազոտի երկօքսիդի ($U\theta_{\text{Կ}_{\text{մթ.}}=0.04\text{մգ/մ}^3$) և ամոնիակի ($U\theta_{\text{Կ}_{\text{մթ.}}=0.04\text{մգ/մ}^3$) միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել $U\theta_{\text{Կ}}$ -ները:

Մթնոլորտային օդում ամոնիակի և ազոտի երկօքսիդի կոնցենտրացիաների փոփոխությունները.



Մթնոլորտային տեղումներ

2019 թվականի 4-րդ եռամսյակի ընթացքում Ամբերդի կայանում վերցվել է 3 փորձանմուշ (անձրև, ձյուն): Վերցված փորձանմուշներում որոշվել են 35 ցուցանիշ: Որոշված ցուցանիշների կոնցենտրացիաները ստորև բերվում են աղյուսակի տեսքով: 4-րդ եռամսյակում չներկայացված ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը կներկայացվի տարեկան տեղեկագրում:

Ամսաթիվ	Ցուցանիշներ						
	Զրաձնային ցուցիչ	Էլեկտրահաղորդականություն (մկՍմ/սմ)	Սուլֆատիոն (մգ/լ)	Քլորիդիոն (մգ/լ)	Նիտրատ իոն (մգ/լ)	Ֆտորիդ իոն (մգ/լ)	Ամոնիում իոն (մգ/լ)
02.11.2019	6.06	15.3	2.126	0.739	2.574	<0.005	0.994
30.11.2019	5.44	14.10	1.762	1.002	1.825	<0.005	0.811
02.12.2019	5.30	17.20	2.813	0.327	2.954	<0.005	1.185

ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՔԱՂՑՐԱՀԱՄ ՁՐԵՐ

Մակերևութային ջրեր

2019 թվականի 4-րդ եռամսյակում մակերևութային ջրերի որակի մոնիթորինգն իրականացվել է հանրապետության 42 գետի, Ապարանի, Ագատի, Ախուրյանի, Երևանյան լճի, Կեչուտի ջրամբարների, Արփա-Սևան թունելի և Սևանա լճի դիտակետերում: Ջրի որակը բնութագրվում է ֆիզիկաքիմիական մինչև 45 ինդիկատորային ցուցանիշով (հիմնական անիոններ և կատիոններ, սնուցող նյութեր, ծանր մետաղներ, առաջնային օրգանական աղտոտիչներ): Ջրի որակի գնահատումը կատարվել է համաձայն ՀՀ կառավարության 2011թ. հունվարի 27-ի N 75-Ն որոշման: Մակերևութային ջրերի որոշ փորձանմուշներում որոշվել են նաև օրգանական միացությունների պարունակությունները:

Ստորերկրյա քաղցրահամ ջրեր

Ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական և որակական դիտարկումներն իրականացվել են հանրապետության ազգային ցանցում ընդգրկված 100 ստորերկրյա ջրաղբյուրներում, որոնք ներառում են 24 շատրվանոց հորատանցք, 33 չշատրվանոց հորատանցք և 43 բնաղբյուր: Ջրաղբյուրներում կատարվում են ջրի ծախսի, մակարդակի (ճնշման) և ջերմաստիճանի դիտարկումներ՝ ամսական 6 անգամ հաճախականությամբ:

Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրեր

Փամբակ գետի ջրի որակը Խնկոյան գյուղից վերև հոկտեմբեր ամսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Սպիտակ քաղաքից ներքև հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Վանաձոր քաղաքից վերև հոկտեմբեր ամսին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս), նոյեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս): Վանաձոր քաղաքից ներքև հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Դեբեդ գետի ջրի որակը Մարցիգետ գետի թափման կետից ներքև հատվածում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Այրում քաղաքից վերև ջրի որակը հոկտեմբեր ամսին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), նոյեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս): Սահմանի մոտ հատվածում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գետի ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):

Ձորագետ գետի ջրի որակը Ստեփանավան քաղաքից վերև հատվածում հոկտեմբեր ամսին գնահատվել է «լավ» (2-րդ դաս): Գետաբերանի հատվածում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գնահատվել է «լավ» (2-րդ դաս):

Տաշիր գետի ջրի որակը Միխայելովկա գյուղից վերև հոկտեմբեր ամսին գնահատվել է «վատ» (5-րդ դաս): Սարատովկա գյուղից ներքև ջրի որակը հոկտեմբեր ամսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), նոյեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս):

Մարցիգետ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գնահատվել է «լավ» (2-րդ դաս):




Ախթալա գետի ջրի որակը գետաբերանի հատվածում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):




Գարգառ գետի ջրի որակը ակունքում հոկտեմբեր ամսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Գետաբերանի հատվածում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Շնող գետի ջրի որակը գետաբերանի հատվածում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Աղստև գետի ջրի որակը Դիլիջան քաղաքից վերև հոկտեմբեր ամսին գնահատվել է «լավ» (2-րդ դաս), նոյեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս): Դիլիջան քաղաքից ներքև, Իջևան քաղաքից վերև, Իջևան քաղաքից ներքև հատվածներում գետի ջրի որակը հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գնահատվել է «լավ» (2-րդ դաս):


Գետիկ գետի ջրի որակը Վահան գյուղից վերև հոկտեմբեր ամսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), գետաբերանի հատվածում հոկտեմբեր ամսին գետի ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), նոյեմբերին՝ «լավ» (2-րդ դաս):







Ստորերկրյա քաղցրահամ ջրեր

Հյուսիսային ՋԿՏ-ում ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 2 բնադրյություն, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը և ծախսը: Ջրի որակի մոնիթորինգն իրականացվել է 1 դիտակետում: Ծախսի և մակարդակի չափումները երեք ամիսների համար ներկայացվում են գրաֆիկների տեսքով: 2058 դիտակետում ընդհանուր լուծված աղերի (0.28 գ/լ) և նիտրատ իոնի (8.75 գ/լ) կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:




ՀՀ Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Մարզկենտրոններ
- Քաղաքներ
- Բնակավայրեր
- ↗ Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի դիտակետեր
- ↖ Ստորերկրյա ջրերի մոնիթորինգի դիտակետեր
- Գետային ցանց
- ՀՀ պետական սահման
- Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք

- Մակերևութային ջրերի որակի դասեր
- 2-րդ դաս
 - 3-րդ դաս
 - 4-րդ դաս
 - 5-րդ դաս



www.armmonitoring.am

Ախտության ջրավազանային կառավարման տարածք



Մակերևութային ջրեր

Ախտության գետի ջրի որակը Ամասիա գյուղից ներքև, Գյումրի քաղաքից վերև, Գյումրի քաղաքից ներքև հատվածներում հոկտեմբեր ամսին գնահատվել է «վատ» (5-րդ դաս): Բազարան գյուղից ներքև հոկտեմբեր ամսին գետի ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Աշոցք գետի ջրի որակը Մուսայելյան գյուղից վերև հոկտեմբեր ամսին գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «անբավարար» (4-րդ դաս):




Կարկաչուն գետի ջրի որակը գետաբերանի հատվածում հոկտեմբեր ամսին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):




Մեծամոր գետի ջրի որակը Վաղարշապատ քաղաքից հարավ հատվածում հոկտեմբեր և դեկտեմբեր ամիսներին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), նոյեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս): Վաղարշապատ քաղաքից հարավ-արևելք և Ռանչպար գյուղից ներքև հատվածներում գետի ջրի որակը երեք ամիսների ընթացքում գնահատվել է «վատ» (5-րդ դաս):





Ստորերկրյա քաղցրահամ ջրեր

Ախուրյանի ՋԿՏ-ում ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 13 բնադրյություն, 6 շատրվանոց և 16 չշատրվանոց հորատանցքերում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը: Ջրի որակի մոնիթորինգն իրականացվել է 15 դիտակետում: Ծախսի և մակարդակի չափումները երեք ամիսների համար, ինչպես նաև նշված 15 դիտակետում ընդհանուր լուծված աղերի և նիտրատ իոնի կոնցենտրացիաներն ըստ դիտակետերի ներկայացված են գրաֆիկների տեսքով:





ՀՀ Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը





ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Մարզկենտրոններ
- Քաղաքներ
- Բնակավայրեր
- ▶ Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի դիտակետեր
- ▶ Ստորերկրյա ջրերի մոնիթորինգի դիտակետեր
- Գետային ցանց
- ՀՀ պետական սահման
- Լճեր և ջրամբարներ
- Ախուրյան ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրերի որակի դասեր

- 2-րդ դաս
- 3-րդ դաս
- 4-րդ դաս
- 5-րդ դաս



www.armmonitoring.am

Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրեր

Քասախ գետի ջրի որակը Ապարան քաղաքից վերև հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), դեկտեմբերին՝ «լավ» (2-րդ դաս): Քասախ գետի ջրի որակը Ապարան քաղաքից ներքև երեք ամիսների ընթացքում գնահատվել է «վատ» (5-րդ դաս): Քասախ գետի ջրի որակը Աշտարակ քաղաքից վերև հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), դեկտեմբերին՝ «լավ» (2-րդ դաս): Աշտարակ քաղաքից ներքև երեք ամիսների ընթացքում գետի ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Քասախ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), դեկտեմբերին՝ «վատ» (5-րդ դաս):

Գեղարոտ գետի ջրի որակը Արագած գյուղից վերև երեք ամիսների ընթացքում գնահատվել է «վատ» (5-րդ դաս): Գետաբերանի հատվածում երեք ամիսների ընթացքում գետի ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):


Շաղվարդ գետի ջրի որակը Փարպի գյուղից ներքև հատվածում հոկտեմբեր և դեկտեմբեր ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):





Հրազդան գետի ջրի որակը Քաղսի գյուղից ներքև, Արգել գյուղից ներքև, Արգնի ՀԷԿ-ից ներքև, Երևանից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ, Հրազդան գետի գետաբերանի և Գեղանիստ գյուղի մոտ հատվածներում երեք ամիսների ընթացքում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Գետառ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Մարմարիկ գետի ջրի որակը Հանքավան գյուղից վերև հոկտեմբեր ամսին գնահատվել է «լավ» (2-րդ դաս): Գետաբերանի հատվածում երեք ամիսների ընթացքում գետի ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):




Տանձաղբյուր գետի ջրի որակը Ծաղկաձոր քաղաքից վերև հատվածում հոկտեմբեր ամսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), նոյեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս): Ծաղկաձոր քաղաքից ներքև հատվածում երեք ամիսների ընթացքում գետի ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):









Ստորերկրյա քաղցրահամ ջրեր


Հրազդանի ՋԿՏ-ում ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 6 բնադրյություն, 9 շատրվանող և 7 չշատրվանող հորատանցքում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը: Ջրի որակի մոնիթորինգն իրականացվել է 8 դիտակետում: Ծախսի և մակարդակի չափումները երեք ամիսների համար, ինչպես նաև նշված 8 դիտակետում ընդհանուր լուծված աղերի և նիտրատ իոնի կոնցենտրացիաներն ըստ դիտակետերի ներկայացված են գրաֆիկների տեսքով (N1297 դիտակետում դիտվել են ծախսի փոքր արժեքներ՝ 0.03-0.05լ/վ):






ՀՀ Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը



Հոկտեմբեր / 2019



Նոյեմբեր / 2019



Դեկտեմբեր / 2019



ՊԱՅՄԱՆԱԳԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Մարզկենտրոններ
- Քաղաքներ
- Բնակավայրեր
- ▲ Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի դիտակետեր
- ▲ Ստորերկրյա ջրերի մոնիթորինգի դիտակետեր
- Գետային ցանց
- ՀՀ պետական սահման
- Լճեր և ջրամբարներ
- Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրերի որակի դասեր

- 2-րդ դաս
- 3-րդ դաս
- 4-րդ դաս
- 5-րդ դաս

Մեանի ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրեր

Ջկնագետ գետի ջրի որակը Մեմյոնովկա գյուղից վերև հոկտեմբեր ամսին գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս):

Մասրիկ գետի ջրի որակը Վերին Շորժա գյուղից վերև հոկտեմբեր ամսին գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս):

Սոթք գետի ջրի որակը Սոթք գյուղից վերև հոկտեմբեր ամսին գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս):

Կարճաղբյուր գետի ջրի որակը Ախպրաձոր գյուղից վերև հոկտեմբեր ամսին գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս):

Վարդենիս գետի ջրի որակը Վարդենիկ գյուղից վերև հատվածում հոկտեմբեր ամսին գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս):

Մարտունի գետի ջրի որակը Գեղիովիտ գյուղից վերև հատվածում հոկտեմբեր ամսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս):

Արգիճի գետի ջրի որակը Լեոնահովիտ գյուղից վերև հոկտեմբեր ամսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս):


Ծակքար գետի ջրի որակը գետաբերանի հատվածում հոկտեմբեր ամսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):






Շողվազ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում հոկտեմբեր ամսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Գավառագետ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում հոկտեմբեր ամսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):

Ստորերկրյա քաղցրահամ ջրեր

Մեանի ՋԿՏ-ում ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 5 բնաղբյուրում, 6 շատրվանող հորատանցքում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը: Ջրի որակի մոնիթորինգն իրականացվել է 6 դիտակետում: Ծախսի և մակարդակի չափումները երեք ամիսների համար, ինչպես նաև նշված 6 դիտակետում ընդհանուր լուծված աղերի և նիտրատ իոնի կոնցենտրացիաներն ըստ դիտակետերի ներկայացված են գրաֆիկների տեսքով:












Սևանա լիճ


2019 թվականի 4-րդ եռամսյակում Սևանա լճի ջրի որակի ուսումնասիրության նպատակով ջրի նմուշառումն իրականացվել է Փոքր և Մեծ Սևանների տարբեր խորություններից: Սևանա լճից վերցված փորձանմուշներում, ձկնատնտեսական նորմերի գնահատման համաձայն, երեք ամիսների ընթացքում ՍԹԿ-ն գերազանցել են, ամոնիում և նիտրիտ իոնների, թթվածնի քիմիական պահանջարկի, ցինկի, պղնձի, քրոմի, մանգանի, վանադիումի և սելենի կոնցենտրացիաները: Որոշված մյուս ցուցանիշների պարունակությունները դիտվել են թույլատրելի կոնցենտրացիաների սահմաններում:

Սևանա լիճ թափվող գետերի զետաքերաններում ազոտի և ֆոսֆորի պարունակությունները.



Մեծ ջրային կենսածին նյութերի պարունակությունները:





Սևանա լճի ջրի որակի մոնիթորինգի արդյունքները 2019 թվականի 4-րդ եռամսյակում

Հոկտեմբեր

Ջրային օբյեկտ, խորություն	Կոնցենտրացիաների գերազանցումը ՄԹԿ-ից (անգամ)						
	Թթվածնի քիմիական պահանջ, ՄԹԿ=30 մգ/լ	Նիտրիտ իոն, ՄԹԿ=0.024 մգ/լ	Ցինկ, ՄԹԿ=0.01 մգ/լ	Պղինձ, ՄԹԿ=0.001 մգ/լ	Մանգան, ՄԹԿ=0.01 մգ/լ	Վանադիում, ՄԹԿ=0.001 մգ/լ	Սելեն, ՄԹԿ=0.001 մգ/լ
Մեծ Սևան, 0.5մ խորություն	1.3	—	—	—	—	7.1	5.0
Մեծ Սևան, 10մ խորություն	1.5	—	—	—	—	6.5	4.7
Մեծ Սևան, 20մ խորություն	—	—	—	1.4	—	7.1	5.1
Մեծ Սևան, 25մ խորություն	—	—	—	2.0	—	5.2	3.6
Մեծ Սևան, 30մ խորություն	1.3	—	—	1.9	6.6	5.7	4.0
Մեծ Սևան, 5մ խորություն	1.3	—	—	—	—	6.4	4.4
Փոքր Սևան, 0.5մ խորություն	1.5	—	—	2.4	—	5.3	3.8
Փոքր Սևան, 10մ խորություն	—	—	—	3.8	—	5.5	3.7
Փոքր Սևան, 20մ խորություն	—	—	—	3.0	—	5.6	3.7
Փոքր Սևան, 30մ խորություն	—	—	2.6	5.3	—	5.6	3.8
Փոքր Սևան, 5մ խորություն	—	—	—	3.2	—	5.7	3.8
Փոքր Սևան, 55մ խորություն	—	—	—	2.3	1.4	5.4	3.6
Փոքր Սևան, 70մ խորություն	—	1.3	—	2.7	—	6.1	4.2
Փոքր Սևան, 80մ խորություն	1.5	—	1.8	3.4	—	6.6	4.9

Նոյեմբեր

Ջրային օբյեկտ, խորություն	Կոնցենտրացիաների գերազանցումը ՄԹԿ-ից (անգամ)					
	Թթվածնի քիմիական պահանջ, ՄԹԿ=30 մգ/լ	Յինկ, ՄԹԿ=0,01 մգ/լ	Պղինձ, ՄԹԿ=0,001 մգ/լ	Քրոմ, ՄԹԿ=0,001 մգ/լ	Վանադիում, ՄԹԿ=0,001 մգ/լ	Մեկեն, ՄԹԿ=0,001 մգ/լ
Փոքր Սևան, 0.5մ խորություն	1.3	–	1.6	4.2	2.8	2.0
Փոքր Սևան, 5մ խորություն	–	–	1.7	5.1	2.8	2.0
Փոքր Սևան, 10մ խորություն	2.0	–	1.5	3.2	2.7	2.3
Փոքր Սևան, 20մ խորություն	1.7	–	1.8	2.6	2.7	2.3
Փոքր Սևան, 30մ խորություն	1.3	–	1.4	2.7	2.4	2.3
Փոքր Սևան, 55մ խորություն	1.3	–	2.7	–	1.9	2.3
Փոքր Սևան, 70մ խորություն	–	–	1.8	2.0	1.7	2.4
Փոքր Սևան, 79մ խորություն	1.7	1.3	2.4	1.6	1.9	2.4
Մեծ Սևան, 0.5մ խորություն	1.5	–	2.0	1.2	2.0	2.3
Մեծ Սևան, 5մ խորություն	1.5	–	1.5	3.5	2.1	2.6
Մեծ Սևան, 10մ խորություն	2.0	–	1.3	4.8	1.9	2.4
Մեծ Սևան, 20մ խորություն	1.8	–	1.5	10.6	2.2	2.6
Մեծ Սևան, 25մ խորություն	1.5	–	1.7	4.6	2.2	3.0
Մեծ Սևան, 30մ խորություն	1.2	–	1.8	1.6	2.2	2.7

Դեկտեմբեր

Ջրային օբյեկտ, խորություն	Կոնցենտրացիաների գերազանցումը ՍԹԿ-ից (անգամ)						
	Թթվածնի քիմիական պահանջ, ՍԹԿ=30 մգ/լ	Ամոնիում իոն, ՍԹԿ=0,39 մգN/լ	Պղինձ, ՍԹԿ=0,001 մգ/լ	Քրոմ, ՍԹԿ=0,001 մգ/լ	Մանգան, ՍԹԿ=0,01 մգ/լ	Վանադիում, ՍԹԿ=0,001 մգ/լ	Սելեն, ՍԹԿ=0,001 մգ/լ
Մեծ Սևան, 0.5մ խորություն	1.3	–	–	3.8	–	2.1	2.9
Մեծ Սևան, 10մ խորություն	1.3	–	–	3.6	–	2.2	2.9
Մեծ Սևան, 20մ խորություն	–	–	–	3.3	–	2.0	2.6
Մեծ Սևան, 25մ խորություն	1.2	–	–	3.6	–	1.8	2.7
Մեծ Սևան, 30մ խորություն	1.2	–	–	3.4	–	2.1	2.5
Մեծ Սևան, 5մ խորություն	1.2	–	–	3.6	–	2.0	2.5
Փոքր Սևան, 0.5մ խորություն	–	–	1.2	3.4	–	2.1	2.5
Փոքր Սևան, 10մ խորություն	–	–	–	3.4	–	2.3	2.9
Փոքր Սևան, 20մ խորություն	1.2	–	–	3.5	–	2.4	2.9
Փոքր Սևան, 30մ խորություն	–	–	–	3.6	–	2.3	2.8
Փոքր Սևան, 5մ խորություն	–	–	–	3.5	–	2.3	2.7
Փոքր Սևան, 55մ խորություն	1.3	–	–	3.6	5.9	1.9	3.0
Փոքր Սևան, 70մ խորություն	–	1.7	1.2	3.5	8.6	1.7	2.7
Փոքր Սևան, 79մ խորություն	1.5	2.1	1.2	3.6	8.9	1.7	2.9

Արարատյան ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրեր

Վեդի գետի ջրի որակը Ուրցաձոր գյուղից վերև հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գնահատվել է «լավ» (2-րդ դաս):



Արփա գետի ջրի որակը Ջերմուկ քաղաքից վերև հոկտեմբեր ամսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), նոյեմբերին՝ «լավ» (2-րդ դաս): Վայք քաղաքից վերև, Վայք քաղաքից ներքև, Եղեգնաձոր քաղաքից վերև, Արենի գյուղից ներքև հատվածներում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):





Եղեգիս գետի ջրի որակը Շատին գյուղից ներքև հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):



Արփա-Սևան թունելի ջրի որակը Ծովինար գյուղից վերև հատվածում հոկտեմբերին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):

Ստորերկրյա քաղցրահամ ջրեր



Արարատյան ՋԿՏ-ում ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 10 բնադրություն, 3 շատրվանոց և 10 չշատրվանոց հորատանցքերում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը: Ջրի որակի մոնիթորինգն իրականացվել է 6 դիտակետում: Ծախսի և մակարդակի չափումները երեք ամիսների համար, ինչպես նաև նշված 6 դիտակետում ընդհանուր լուծված աղերի և նիտրատ իոնի կոնցենտրացիաներն ըստ դիտակետերի ներկայացված են գրաֆիկների տեսքով:







ՀՀ Արարատյան ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը



Հարավային ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրեր

Կարձևան գետի ջրի որակը գետաբերանի հատվածում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Մեղրիգետ գետի ջրի որակը Մեղրի քաղաքից վերև և գետաբերանի հատվածներում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Ողջի գետի ջրի որակը Քաջարան քաղաքից վերև հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գնահատվել է «լավ» (2-րդ դաս): Քաջարան քաղաքից ներքև հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գետի ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Կապան քաղաքից վերև հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գետի ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Կապան քաղաքի օդանավակայանից ներքև հատվածում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գետի ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):


Աճանան (Նորաշենիկ) գետի ջրի որակը Աճանան գյուղից վերև հոկտեմբեր ամսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), գետաբերանի հատվածում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին՝ «վատ» (5-րդ դաս):



Գեղի գետի ջրի որակը Աջաբաջ գյուղից վերև հոկտեմբեր ամսին գնահատվել է «լավ» (2-րդ դաս): Գետաբերանի հատվածում հոկտեմբեր ամսին գետի ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), նոյեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս):

Որոտան գետի ջրի որակը Գորայք գյուղից վերև հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գնահատվել է «լավ» (2-րդ դաս): Որոտան գետի ջրի որակը Սիսիան քաղաքից վերև հատվածում հոկտեմբեր ամսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), նոյեմբերին՝ «վատ» (5-րդ դաս): Սիսիան քաղաքից ներքև հատվածում հոկտեմբեր ամսին գետի ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), նոյեմբերին՝ «վատ» (5-րդ դաս): Տաթև ՀԷԿ-ից ներքև հոկտեմբեր ամսին գետի ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), նոյեմբերին՝ «վատ» (5-րդ դաս):

Սիսիան գետի ջրի որակը Արևիս գյուղից վերև հոկտեմբեր ամսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), գետաբերանի հատվածում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին՝ «անբավարար» (4-րդ դաս):


Վարարակ գետի ջրի որակը Գորիս քաղաքից վերև հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), Գորիս քաղաքից ներքև հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գետի ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):










Ստորերկրյա քաղցրահամ ջրեր

Հարավային ՋԿՏ-ի ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մշտա-դիտարկումներ կատարվել են 7 բնադրություն, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաս-տիճանը և ծախսը: Ծախսի և մակարդակի չափումները երեք ամիսների համար, ինչպես նաև նշված 4 դիտակետում լուծված աղերի և նիտրատ իոնի կոնցենտրացիաներն ըստ դիտակետերի ներկայացված են գրաֆիկների տեսքով:





ՀՀ Հարավային ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Մարզկենտրոն
- Քաղաքներ
- Բնակավայրեր
- ▲ Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի դիտակետեր
- ◆ Ստորերկրյա ջրերի մոնիթորինգի դիտակետեր
- Գետային ցանց
- ՀՀ պետական սահման
- Լճեր և ջրամբարներ
- Հարավային ջրավազանային կառավարման տարածք


Մակերևութային ջրերի որակի դասեր

- 2-րդ դաս
- 3-րդ դաս
- 4-րդ դաս
- 5-րդ դաս



ՀՀ ջրամբարների ջրերի որակը 2019 թվականի 4-րդ եռամսյակում

Ախուրյանի ջրամբարի ջրի որակը հոկտեմբեր ամսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Ապարանի ջրամբարի ջրի որակը հոկտեմբեր ամսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), նոյեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս), դեկտեմբերին՝ «լավ» (2-րդ դաս): Երևանյան լճի ջրի որակը երեք ամիսների ընթացքում գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս): Ազատի ջրամբարի ջրի որակը հոկտեմբեր ամսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Կեչուտի ջրամբարի ջրի որակը հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գնահատվել է «լավ» (2-րդ դաս):



Հոկտեմբեր

Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրությունը (Դիտակետի համարը)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դասը	Ջրի որակի ընդհանրական դասը
Ախուրյանի ջրամբար	ամբարտակի մոտ (110)	Լուծված թթվածին, ֆոսֆատ իոն, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	3-րդ
Ապարանի ջրամբար	ամբարտակի մոտ (111)	Լուծված թթվածին	4-րդ	4-րդ
Երևանյան լիճ	ամբարտակի մոտ (112)	Նիտրատ իոն, ֆոսֆատ իոն, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
		Լուծված թթվածին, ԹՔՊ, նիտրիտ իոն	4-րդ	
Ազատի ջրամբար	ամբարտակի մոտ (113)	ԿԼ	3-րդ	3-րդ
Կեչուտի ջրամբար	ամբարտակի մոտ (114)	-	2-րդ	2-րդ

Նոյեմբեր

Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրությունը (Դիտակետի համարը)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դասը	Ջրի որակի ընդհանրական դասը
Ապարանի ջրամբար	ամբարտակի մոտ (111)	Ամոնիում իոն	3-րդ	3-րդ
Երևանյան լիճ	ամբարտակի մոտ (112)	Լուծված թթվածին, ամոնիում իոն, նիտրատ իոն, ֆոսֆատ իոն, ԸԱԱ	3-րդ	4-րդ
		Նիտրիտ իոն	4-րդ	
Կեչուտի ջրամբար	ամբարտակի մոտ (114)	-	2-րդ	2-րդ

Դեկտեմբեր

Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրությունը (Դիտակետի համարը)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դասը	Ջրի որակի ընդհանրական դասը
Ապարանի ջրամբար	ամբարտակի մոտ (111)	-	2-րդ	2-րդ
Երևանյան լիճ	ամբարտակի մոտ (112)	Ամոնիում իոն, նիտրատ իոն, ֆոսֆատ իոն, ԸԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
		Նիտրիտ իոն	4-րդ	

Արաքս գետ

ԱՐԱՔՍ ԳԵՏԻ ԶՐԻ ՈՐԱԿԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԴԻՏԱՑԱՆՑ



2019 թվականի 4-րդ եռամսյակում վերցվել են փորձանմուշներ Արաքս գետի ջրի 10 և հատակային նստվածքների 5 դիտակետից: Արաքս գետի հայ-իրանական համատեղ նմուշառումը տեղի է ունեցել նոյեմբեր ամսին:

Գետի ջրի փորձանմուշներում որոշված ցուցանիշներից, ձկնատնտեսական ՍԹԿ-ներով գնահատման համաձայն, դիտվում է վնասողիումով, որոշ փորձանմուշներում պղնձով, քրոմով, մանգանով, երկաթով և ալյումինով բարձր աղտոտվածություն: Որոշված մյուս ցուցանիշներից գերազանցվել են լուծված թթվածնի, ԹՔՊ-ի, ամոնիում, նիտրիտ և սուլֆատ իոնների, ցինկի, կոբալտի, նիկելի, մանգանի, նատրիումի և սելենի համապատասխան ՍԹԿ-ները: Արաքս գետի աղտոտվածության գերազանցումների վերաբերյալ մանրամասն տեղեկություն ըստ առանձին ամիսների տրվում է աղյուսակների տեսքով:

Նոյեմբերին Արաքս գետի հատակային նստվածքներում որոշված ցուցանիշներ.

Կոնցենտրացիա, գ/կգ	Դիտակետ				
	AMS_1	AMS_2	AMS_3	IMS_1	IMS_5
Ալյումին	1.00	3.93	3.63	0.73	2.13
Երկաթ	9.51	28.97	32.84	6.24	17.22
Մանգան	0.534	0.197	0.203	0.475	0.177
Նիկել	0.127	0.004	0.007	0.139	0.003
Պղինձ	0.037	0.593	0.733	0.035	0.553
Արսեն	0.011	0.009	0.009	0.009	0.006
Մոլիբդեն	0.0018	0.0375	0.0454	<0.001	0.0217

«Արաքս գետի հայ-իրանական համատեղ մոնիթորինգ»



Արաքս գետի ջրի որակի մոնիթորինգի գնահատման արդյունքները 2019 թվականի 4-րդ եռամսյակում

Հոկտեմբեր

	Կոնցենտրացիաների գերազանցումը ՍԹԿ-ից (անգամ)												
